



Հավելված  
Հաստատվել է ՀՀ ՎՊ Խորհրդի  
2010թ.-ի հոկտեմբերի 20-ի  
թիվ 29/2 որոշմամբ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏ

### ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ընդերքի օգտագործման տրամադրման օրինականության և ընդերքի օգտագործման նկատմամբ վերահսկողության արդյունքների՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի հանքավայրերի վերաբերյալ

#### Վերահսկողության հիմքը՝

Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի 2010 թվականի գործունեության տարեկան ծրագրի 7-րդ կետը, ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի 2010թ. ապրիլի 2-ի թիվ 11/6 որոշումը:

Վերահսկողության նպատակը՝ ընդերքի օգտագործման տրամադրման օրինականությունը և 2007-2010թթ. ընթացքում ընդերքի օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Վերահսկողության առարկան՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի հանքավայրերի օգտագործման տրամադրման օրինականությունը և օգտագործման համապատասխանությունը ՀՀ օրենսդրությանը:

Վերահսկողության օբյեկտները՝ ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն, ՀՀ բնապահպանության նախարարություն, ընդերքօգտագործող՝ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերություն:

Վերահսկողության կատարման ժամկետը՝ 2010թ.-ի ապրիլի 2-ից՝ 2010թ. հոկտեմբերի 18-ը:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածը՝ 2007թ.-ի հունվարի 1-ից մինչև 2010թ.-ի մարտի 31-ը ներառյալ:

Վերահսկողության մեթոդաբանությունը՝ Վերահսկողության իրականացման ընթացքում կիրառվել են դիտարկման, ստուգման և վերլուծության ձևեր: Վերահսկողությունն ընդգրկել է համապատասխանության, ֆինանսական և արդյունավետության տեսակները:

Վերլուծության փուլում ամփոփվել են դիտարկման և ստուգման փուլերում արձանագրված փաստերը:

### **Վերահսկողության արդյունքները՝**

Ընկերության կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե ներկայացված շահութահարկի հաշվարկ-հաշվետվությունների համաձայն, ընկերության վնասը վերահսկողությամբ ընդգրկված ժամանակահատվածի համար ըստ տարիների կազմել է. 2007թ.-ին՝ 16,034,189.0 հազ. դրամ, 2008թ.-ին՝ 17,270,237.0 հազ. դրամ, 2009թ.-ին՝ 11,605,621.0 հազ. դրամ:

### **Համապատասխանության վերաբերյալ**

«Արարատ ոսկու արդյունահանման ձեռնարկություն» ՍՊԸ (այսուհետ՝ «ԱՈԱԶ» ՍՊԸ) 2008թ.-ի հուլիսի 22-ին վերանվանվել է «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊԸ (այսուհետ՝ Ընկերություն): Ընկերության միակ մասնակից 100% բաժնեմասի սեփականատերն է հանդիսանում Կայմանյան կղզիներում գրանցված «Ֆրսթ Դայնսթի Մայնս Արմենիա» լիմիթեդ ընկերությունը, որի կանոնադրական կապիտալը կազմում է 23,643,022.0 հազ. դրամ: «ԱՈԱԶ» ՍՊԸ-ին 1998թ.-ի սեպտեմբերի 8-ին ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի ոսկու հանքավայրերում արդյունահանում իրականացնելու նպատակով տրվել է թիվ ՀՎՇ 13/39 և ՀՎՇ 13/40 գործունեության թույլտվությունները: Այնուհետև, հանքավայրերը շահագործելու նպատակով 1999թ.-ի մարտի 13-ին ՀՀ բնապահպանության և «ԱՈԱԶ» ՍՊԸ-ի միջև կնքվել է «ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրը շահագործման հանձնելու մասին» և «ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի ոսկու հանքավայրը շահագործման հանձնելու մասին» պայմանագրերը: «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 65-րդ և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածների համաձայն «ԱՈԱԶ» ՍՊԸ-ին տրված թիվ ՀՎՇ 13/39 և թիվ ՀՎՇ 13/40 գործունեության թույլտվությունները 2004թ. հունիսի 7-ին փոխարինվել է թիվ ՀԱ-Լ-14/166 և ՀԱ-Լ-14/167 հանքարդյունահանման հատուկ լիցենզիաներով: ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության և «ԱՈԱԶ» ՍՊԸ-ի միջև 2008թ.-ի փետրվարի 29-ին կնքվել է Սոթքի, ինչպես նաև Մեղրաձորի ոսկու հանքավայրերից

«Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման» համապատասխան թիվ 368 և 369 լիցենզային պայմանագրերը:

### **Վերահսկողության ընթացքում արձանագրվել է՝**

1. «ԱՌԱՋ» ՍՊԸ-ն 2004թ. մայիսի 4-ի թիվ LS-Y՝04-066 գրությամբ դիմել է ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարին ՀՀ օրենսդրության պահանջներին համաձայն վերագրանցել թիվ ՀՎԾ 13/39 և թիվ ՀՎԾ 13/40 գործունեության թույլտվությունները: Նախարարության կողմից վերաձևակերպվել է ընկերությանը նախկինում տրամադրված ընդերքօգտագործման իրավունք սահմանող փաստաթղթերից գործունեության թույլտվությունները՝ 2004թ.-ի հունիսի 7-ին փոխարինելով թիվ ՀԱ-Լ-14/166 և ՀԱ-Լ-14/167 հանքարդյունահանման հատուկ լիցենզիաներով: «ԱՌԱՋ» ՍՊԸ-ի կողմից հանքավայրի շահագործման աշխատանքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած նախագծեր (այսուհետ՝ Նախագիծ) չի ներկայացվել «Լիազոր մարմին», ինչպես նաև ընկերությունը չի դիմել «Լիազոր մարմին»՝ «ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի, ինչպես նաև ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի ոսկու հանքավայրերը շահագործման հանձնելու մասին» պայմանագրերը վերագրանցման և նոր օրենսդրությանը համապատասխանեցման նպատակով:

**Խախտվել է** «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 65-րդ հոդվածի առաջին մասի պահանջը, այն է՝ «...օրենսգիրքը գործողության մեջ դրվելուց հետո՝ մինչև 2004 թվականի հուլիսի 1-ը, ընդերքօգտագործողները պարտավոր են վերագրանցել ընդերքօգտագործման իրավունք սահմանող փաստաթղթերը՝ թույլտվությունները, լիցենզիաները և պայմանագրերը՝ համապատասխանեցնելով դրանք սույն օրենսգրքի պահանջներին»:

2. «ԱՌԱՋ» ՍՊԸ-ի կողմից սկսված 2004թ.-ի հուլիսի 1-ից մինչև լիցենզային պայմանագրերի կնքման պահը (2008թ.-ի փետրվարի 29-ը) Սոթքի և Մեղրաձորի ոսկու հանքավայրերի շահագործումը և հանքարդյունահանումը կատարվել է առանց ուժի մեջ մտած լիցենզիաների, օրենքով սահմանված ժամկետում չի կնքվել լիցենզային պայմանագրեր և չի ներկայացվել համապատասխան Նախագծեր, որոնք հանդիսանում են տվյալ հանքային իրավունքը հավաստող լիցենզիայի անբաժանելի մասը: Ընկերության կողմից մինչ օրս (2010թ.-ի սեպտեմբերի 23-ի դրությամբ) հանքարդյունահանումը իրականացվում է առանց հանքավայրերի շահագործման աշխատանքների ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած և հաստատված

նախագծերի: Ընկերության և ՀՀ բնապահպանության նախարարության, ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության միջև 2008թ.-ի փետրվարի 29-ին կնքված Մեղրաձորի, ինչպես նաև Սոթքի ոսկու հանքավայրերից «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման» համապատասխան թիվ 368 և 369 լիցենզային պայմանագրերը, ըստ էության, պետք է համարվեն անվավեր, քանի որ հանքավայրերն ունեն պաշարների վերահաստատման անհրաժեշտություն և պայմանագրերը կնքվել են սահմանված (մինչև 2004թ.-ի հուլիսի 1-ը) ժամկետից ուշ:

**Համաձայն՝** «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 31-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի՝ «ՀՀ տարածքում ընդերքօգտագործողներ կարող են լինել իրավաբանական եւ ֆիզիկական այն անձինք, որոնք, համաձայն օրենսգրքի 9-10-րդ հոդվածների, ձեռք են բերել օգտակար հանածոների, ... հանքավայրերի շահագործման, ինչպես նաև հանքային հումքի արդյունահանման եւ վերամշակման ընթացքում առաջացած թափոնների մշակման իրավունքը», «Օգտակար հանածոների հանքավայրերը շահագործման են տրամադրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով»:

**Համաձայն՝** «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված պահանջի, այն է՝ «Ընդերքի պետական սեփականության իրավունքի, ինչպես նաև ընդերքի տրամադրման եւ օգտագործման՝ սույն օրենսգրքի պահանջների խախտումներով գործարքներն անվավեր են: Սույն օրենսգրքի պահանջների խախտումն առաջացնում է պատասխանատվություն՝ Հայաստանի Հանրապետության օրենքներով եւ իրավական այլ ակտերով սահմանված կարգով»:

### **Խախտվել է՝**

- «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 39-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջը այն է՝ «Ընդերքօգտագործումը, օգտակար հանածոների հանքավայրերի ... շահագործման, արդյունահանված հանքային հումքի վերամշակման, ... առանց սահմանված կարգով պետական փորձաքննության ենթարկված նախագծի, արգելվում է»:
- «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և 6-րդ մասի 5-րդ կետի պահանջները, այն է՝ «... հանքարդյունահանում կարող է իրականացվել միայն սույն օրենքի համաձայն

տրամադրված հանքային իրավունքների կամ սույն օրենքով նախատեսված այլ իրավասության առկայության դեպքում» «Լիցենզառուի եւ լիազոր մարմնի միջեւ կնքվում է լիցենզային պայմանագիր: Լիցենզային պայմանագիրը, ինչպես նաեւ սահմանված կարգով փորձաքննություն անցած եւ հաստատված նախագիծը հանդիսանում են տվյալ հանքային իրավունքը հավաստող լիցենզիայի անբաժանելի մասը: Լիցենզիայի գործողության ժամկետի սկիզբ է համարվում լիցենզային պայմանագրի կնքման պահը: Լիցենզիայի տրման և լիցենզային պայմանագրի կնքման միջև ընկած ժամանակահատվածը չի կարող գերազանցել՝

5) օրենսդրությամբ սահմանված կարգով պահանջվող պաշարների վերահաստատման անհրաժեշտության դեպքում պաշարների վերահաստատումից հետո՝ 9 ամիսը. »:

- «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջը, այն է՝ «Սույն օրենքի եւ լիցենզիայի պայմանների համաձայն՝ հանքարդյունահանման հատուկ լիցենզառուն պարտավոր է՝

1) աշխատանքներն իրականացնել լիցենզիայի եւ հաստատված նախագծի պայմաններին համապատասխան.

2) կատարել լիազոր մարմնի՝ սույն օրենքով սահմանված կարգով տրված ցուցումները.

3) գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան»:

«ԱՌԱԶ» ՍՊԸ-ն, համաձայն «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի, որպես ժամանակավոր լիցենզառու, իրավունք ունի անցումային ժամանակաշրջանում (մինչև 2004թ.-ի հուլիս 1-ը) դիմել «Լիազոր մարմին»՝ սույն օրենքով սահմանված կարգով հանքային իրավունք (լիցենզիա, փորձաքննություն անցած նախագիծ, լիցենզային պայմանագիր) ստանալու նպատակով: Սակայն «ԱՌԱԶ» ՍՊ ընկերությունը չի օգտվել օրենքով իրեն վերապահված իրավունքից:

3. «ԱՌԱԶ» ՍՊԸ-ին 27.02.2006թ. տրամադրված ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի N 01-16/6-232 գրությամբ համարվել է, որ կոնցեսիոն գործակալությունը, ղեկավարվելով «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 65-րդ հոդվածի պահանջով, կատարել է «Մեղրաձորի և Սոթքի ոսկու հանքավայրերը շահագործման հանձնելու մասին» 1999թ. մարտի 13-ին ստորագրված պայմանագրի վերագրանցում և,

հետևաբար, պայմանագիրը համարվում է ուժի մեջ: Նշվել է նաև, որ հանքարդյունահանման գործունեությունը սահմանող փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ օրենսդրությանը: Այն դեպքում, երբ ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարի 2006թ. փետրվարի 22-ի թիվ 34-Ա հրամանի համաձայն մարտի 3-ից մինչև 5-ը ներառյալ, ՀՀ կոնցեսիոն գործակալության աշխատակիցների կողմից ուսումնասիրվել է «ԱՌԱՉ» ՍՊԸ-ի Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման նպատակով ստանձնած պարտավորությունների կատարումը, որի վերաբերյալ կազմվել է հաշվետվություն, համաձայն որի ընկերությունը չունի հանքային իրավունքների փաթեթը կազմող ՀՀ օրենքով սահմանված կարգով պետական փորձաքննություն անցած և հաստատված հանքավայրի շահագործման նոր նախագիծ, լիցենզային պայմանագիր և լեռնահատկացում: «ԱՌԱՉ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի ոսկու հանքավայրի շահագործումը առանց պետական փորձաքննություն անցած և հաստատված շահագործման նոր նախագծի և լեռնահատկացման ակտի, հանձնաժողովը առաջարկել է համարել անթույլատրելի:

### **Լիցենզային պայմանագրով սահմանված պարտավորությունների վերաբերյալ**

#### **Սոթքի և Մեղրաձորի ոսկու հանքավայրեր**

1. 2008թ.-ի փետրվարի 29-ին կնքված Մեղրաձորի, ինչպես նաև Սոթքի ոսկու հանքավայրերից «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման» համապատասխան թիվ 368 և 369 լիցենզային պայմանագրերով և հավելվածներով սահմանվել է, որ օրինական հանքահանում վերսկսելու համար անհրաժեշտ է կատարել մի շարք գործառնություններ:

- Պետք է կատարվեր հանքավայրերի ամբողջ պաշարների արմատական վերագնահատման-վերահաստատման աշխատանքներ և հանքավայրերի շահագործման նոր նախագծերի կազմում: Պարտավորությունը Ընկերության կողմից մինչ օրս (2010թ.-ի սեպտեմբերի 23) չի կատարվել, որի ժամկետը, համաձայն լիցենզային պայմանագրի 3.2 կետի, լրանում է 2010 թվականի օգոստոսի 29-ին:

- 3-ամսյա ժամկետում ՀՀ առևտրի և տնտեսական զարգացման նախարարության հաստատմանը պետք է ներկայացվեր Սոթքի ոսկու հանքավայրի առաջիկա 30 ամիսներին (ժամկետը լրանում է 29.08.2010թ.-ին) կատարվելիք լեռնանախապատրաստական լեռնային աշխատանքների կատարման մանրամասն ծրագիրը: Աշխատանքները սկսել

նախարարության համաձայնությունը ստանալուց հետո: Պարտավորությունը Ընկերության կողմից կատարվել է սահմանված ժամկետից ուշ, իսկ աշխատանքները սկսվել են առանց նախարարության համաձայնությունը ստանալու, որով խախտվել է լիցենզային պայմանագրի 3-րդ հավելվածի 5-րդ կետով սահմանված պահանջները:

- Ընկերությունը պարտավորվել է հանքավայրերի համար ՀՀ բնապահպանության նախարարության հաստատմանը ներկայացնել բնապահպանական միջոցառումների ժամանակացույց և դրանց առնչվող ծախսերի նախահաշիվները (ընթացիկ հատկացումները), սակայն պարտավորությունը չի կատարվել:

- Ընկերությունը պարտավորվել է ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի հանքավայրից տարեկան նվազագույնը արդյունահանել 600,000 տոննա (արդյունահանվել է 2007՝ 16,655 տ, 2008՝ 29,236 տ, 2009՝ 320,554 տ, ընդամենը 366,445 տ), իսկ ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի հանքավայրից՝ 120,000 տոննա հանքաքար (արդյունահանվել է 2007՝ 1,600 տ, 2008՝ 0 տ, 2009՝ 0 տ, ընդամենը 1,600 տ): Պարտավորությունները չեն կատարվել, որով խախտվել են թիվ 368 և 369 լիցենզային պայմանագրերի 4.1 կետերի պահանջները: Համաձայն, «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի և լիցենզային պայմանագրերի 11.6 կետերի՝ «Լիազոր մարմինը» դադարեցնում է հանքային իրավունքը եթե «Լիցենզառուն» ոչ պակաս, քան երեք տարվա ընթացքում չի կարողացել իրականացնել հանքարդյունահանման աշխատանքներն իր հանքարդյունահանման նախագծին համապատասխան, և այդ ընթացքում արդյունահանել է արդյունահանման սահմանված չափաքանակի 50 տոկոսից պակաս:

- 2008թ.-ի փետրվարի 29-ին կնքված Մեղրաձորի, ինչպես նաև Սոթքի ոսկու հանքավայրերից «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման» համապատասխան թիվ 368 և 369 լիցենզիային պայմանագրերով սահմանվել է, որ Ընկերության նախկին ղեկավարությունից ժառանգած մի շարք սխալների և թերացումների շտկման, հանքաքարի վերամշակման սարքավորումների և հանգույցների, ինչպես նաև վերամշակման տեխնոլոգիաների կատարելագործման և արդիականացման համար Ընկերությունը պետք է մշակեր նոր ներդրումային նախագիծ, սակայն պարտավորությունը չի կատարվել:

2. 2008թ.-ի փետրվարի 29-ին կնքված Մեղրաձորի, ինչպես նաև Սոթքի ոսկու հանքավայրերից «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման»

համապատասխան թիվ 368 և 369 լիցենզային պայմանագրերով և հավելվածներով սահմանված պարտավորությունների չկատարմամբ խախտվել է՝ «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 10-րդ կետի պահանջը. «Ընդերքօգտագործողները պարտավոր են ապահովել պայմանագրային բոլոր պարտավորությունների կատարումը»:

Պայմանագրային պարտավորությունները չկատարելու, Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները չկատարելու համար Ընկերության հանքային իրավունքը կարող է դադարեցվել, իսկ լիցենզիային պայմանագիրը լուծվել:

Համաձայն՝ «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 6-րդ կետերի՝ «Ընդերքօգտագործման իրավունքը վաղաժամկետ դադարեցվում է, իսկ պայմանագիրը լուծվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, ինչպես նաև սույն օրենսգրքով սահմանված հետեւյալ հիմքերով, եթե՝

- 5) խախտվել են ընդերքօգտագործման պայմանագրային պարտավորությունները.
- 6) ընդերքօգտագործման ընթացքում չեն պահպանվել Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները»

**Սոքքի ոսկու հանքավայրից մարված պաշարների, արդյունահանված հանքաքարի, ոսկու միջին պարունակության և քանակի մասին**

ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոքքի ոսկու հանքավայրի պաշարները հաստատվել են ԽՍՀՄ պաշարների պետական հանձնաժողովի կողմից 1980թ.-ի նոյեմբերի 21-ի թիվ 8635 արձանագրությամբ:

Ընդերքօգտագործող «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությունը չունի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փորձաքննություն անցած հանքավայրի շահագործման աշխատանքների նախագիծ, հանքավայրի շահագործումն իրականացվել է համաձայն 1982թ.-ին ԽՍՀՄ ՊՊՀ-ի կողմից հաստատված նախագծով, իսկ 2008-2010թթ. հանքարդյունահանումն իրականացվել է 30 ամիսների «Լեռնային աշխատանքների ծրագրով» (այսուհետ՝ Ծրագիր):

Ընկերությունում չի պահպանվել հանքաքարի վերամշակման պրոցեսում կատարված նմուշարկման արդյունքում ստացված նմուշների կրկնօրինակները, որը թույլ չի տալիս կատարել կրկնակի անալիզ:



Ապրանքային հանքաքարի ոչ միայն որակը, այլև քանակը (կշիռը) վերջնականապես որոշվում և ձեռնարկության հանքարդյունահանման ընդհանուր հաշվեկշռում (բալանսում) գրանցվում է բացառապես Արարատի ֆաբրիկայում վերամշակման արդյունքում ստացված տվյալներով, հետադարձ հաշվարկով, սկսած ստացված վերջնական արդյունքից՝ մինչև ընդերքից արդյունահանված հանքաքարը, որն անթույլատրելի է և հանգեցնում է հետախուզված հաշվեկշռային պաշարների և մարված պաշարների հաշվարկի աղավաղմանը:

Ստուգմամբ ընդգրկված ժամանակահատվածում Սոթքի հանքի լաբորատորիայում մշակվել են 35,420 շարքային նմուշներ: Համաձայն, ՀՀ կառավարության 09.11.2006թ.-ի թիվ 1678-Ն որոշման՝ օգտակար հանածոների որակը գնահատելու նպատակով, անալիզի ենթարկված շարքային նմուշների կրկնօրինակների առնվազն 5%-ը ենթակա է հսկողական անալիզների, որոնք պետք է իրականացվեն ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության համակարգի «Անալիտիկ» ՓԲ Ընկերության լաբորատորիա ուղարկված նմուշները անալիզի ենթարկելու միջոցով:

Հսկողական անալիզի ներկայացվել են ընդամենը 720 նմուշներ՝ առնվազն 1,771-ի փոխարեն, տարբերությունը՝ 1,051 նմուշ: Արարատի ոսկու կորզման ֆաբրիկայի լաբորատորիայում մետաղների կորզման նպատակով և պոչամբարների մասով կատարված թվով 2,340 անալիզներից հսկողական անալիզի որևէ նմուշ չի ուղարկվել:

Ընդերքի շահագործման նկատմամբ ՀՀ կառավարության սահմանած պահանջի չկատարման հետևանքով խախտվել են «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 28-րդ և 42-րդ հոդվածների, ինչպես նաև «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի պահանջները, ըստ որի, ընդերք օգտագործողները պարտավոր են ապահովել հանքային հումքի արդյունահանման, տեղափոխման և վերամշակման ընթացքում ՀՀ-ում ընդունված ստանդարտների, նորմերի ու կանոնների կատարումը:

Համաձայն «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետի ընդերքօգտագործողը պարտավոր է ապահովել հետախուզված, ընդերքից արդյունահանված և դրանում թողնված օգտակար հանածոների պաշարների, դրանց պարունակած բաղադրամասերի, որակի ու քանակի մասին հավաստի տվյալների

հավաքումը, պահպանումը և լիազորված մարմնին տրամադրումը: Ընկերության կողմից նշված պահանջները ոչ ամբողջությամբ կատարելը և անրահժեշտ տվյալների մասնակի ներկայացնելը հանգեցրել է տեղեկատվության անհավաստիությանը:

### 1. Կոնցեսիոն և բնօգտագործման վճարների մասին

«Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն ընկերությունը պարտավոր է տրամադրված տարածքի համար ՀՀ պետական բյուջե վճարել տարեկան Սոթքի հանքավայրի համար՝ 3,830.0 հազ. դրամի, իսկ Մեղրաձորի հանքավայրի համար՝ 2,210.0 հազ. դրամի չափով կոնցեսիոն վճար, որն առ այսօր չի վճարվել: Կոնցեսիոն վճարի գծով պարտքը կազմում է Սոթքի հանքավայրի համար՝ 15,320.0 հազ. դրամ, իսկ, Մեղրաձորի համար՝ 8,840.0 հազ. դրամ, կամ ընդամենը՝ 24,160.0 հազ. դրամ, որը ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե:

Ընկերությունը 2009թ.-ի ընթացքում հանքավայրից մարել է 320.5 հազ. տ հանքաքար, ոսկին կազմել է 1,580.7 կգ, միջին պարունակությունը՝ 4.93 գ/տ, հաստատված պաշարի 6.3 գ/տ պարունակության փոխարեն, որի դեպքում ոսկու մարված պաշարը կկազմեր 2,019.2 կգ: Արդյունքում, համաձայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետի՝ տարբերության՝ 438.5 կգ ոսկու մարված պաշարի համար լրացուցիչ բնօգտագործման վճարը հաշվարկելու դեպքում կկազմի՝ 113,210.3 հազ. դրամ  $((438.5 * 11474.5 * 1.5\%) + 50\%$  տուգանք որպես թաքցված ծավալ):

Ընկերությունը 2010թ.-ի առաջին եռամսյակի ընթացքում հանքավայրից մարել է 76.5 հազ. տոննա հանքաքար, ոսկին կազմել է 315.5 կգ, միջին պարունակությունը՝ 4.12 գ/տ, հաստատված պաշարի 6.3 գ/տ պարունակության փոխարեն, որի դեպքում ոսկու մարված պաշարը կկազմեր 481.95 կգ: Արդյունքում, տարբերության՝ 166.45 կգ ոսկու մարված պաշարի համար հաշվարկված լրացուցիչ բնօգտագործման վճարը հաշվարկելու դեպքում կկազմի 50,339.2 հազ. դրամ  $((166,45 * 13441,3 * 1.5\%) + 50\%$  տուգանք որպես թաքցված ծավալ):

Ընկերությունը 2007թ.-ի առաջին եռամսյակի համար ներկայացրած բնօգտագործման վճարների հաշվարկ-հաշվետվություններով թելուրի մարված պաշարի համար բնօգտագործման վճարների հաշվարկ չի կատարել և չի վճարել: 2007թ. տարեկան 5-ՕՀՊՀ հաշվետվությամբ հանքաքարի մարված պաշարը կազմել է 16.665 հազ. տոննա, թելուրի մասով

մարված պաշարը կազմել է 0.322 տոննա, հաշվարկված լրացուցիչ բնօգտագործման վճարը թելուրի մարված պաշարի համար հաշվարկելու դեպքում կկազմի՝ 319.0 հազ. դրամ  $(0.322 * 50809.7 * 1.3\%) + 50\%$  տուգանք որպես թաքցված ծավալ):

## **2. Հանքաքարի աղքատացման վերաբերյալ**

2009թ.-ին արդյունահանվել է 476.2 հազ. տ ապրանքային հանքաքար՝ ոսկու ընդհանուր քանակը 1,501.7կգ: 476.2 հազ. տ ապրանքային հանքաքարի մեջ արդյունահանված օգտակար հանածոն կազմել է՝ 304.5 հազ. տ, իսկ աղքատացումը՝ 171.7 հազ. տոննա, կամ 36%-ը: Աղքատացման ցուցանիշը տարեկան հաշվետվություններով Լիազոր մարմին ներկայացվել է Ծրագրով սահմանված 15%-ի չափով, որը պետք է կազմեր 53.7 հազ. տ հանքաքար: Ծրագրով նախատեսվածի և փաստացի ցուցանիշների տարբերությունը կազմել է 118.0 հազ. տոննա, կամ արդյունահանված զանգվածի 24.7 %-ը: Դա անթույլատրելի շեղում է, և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» օրենքի 3-րդ հոդվածի համաձայն համարվում է էական խախտում:

Արդյունահանված ոսկու՝ 1,501.7 կգ քանակին փաստացի որևէ ավելացում չի կատարվել, քանի որ աղքատացված զանգվածում ոսկու պարունակությունը առանց բավարար հիմնավորման համարվել է գրոյական: Ըստ նախագծի հանքային մարմնի եզրագծերում ոսկու միջին պարունակությունը տատանվում է 0 գ/տ մինչև 1 գ/տ: Ուստի 118.0 հազ. տ աղքատացված զանգվածի մեջ ոսկու միջին պարունակության 0-ից տարբեր ցանկացած թվով հաշվարկելու դեպքում կստացվի ոսկու քանակի էական տարբերություն: Այսպես՝ եթե հիմք ընդունենք նշված ցուցանիշի միջինը՝ 0.5գ/տ պարունակությունը, արդյունքում կստացվի 63.05 կգ ոսկի:

## **3. Հանքավայրի ոչ օրինական շահագործման վերաբերյալ**

«Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 36-րդ հոդվածի համաձայն օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման համար լեռնահատկացումը կատարվում է լիազոր մարմնի կնքած լիցենզային պայմանագրի հիման վրա: Լեռնահատկացումը կատարվում է հանքավայրի շահագործման նախագծերով: Լեռնահատկացման ակտը կցվում է լիցենզային պայմանագրին որպես դրա անբաժանելի մաս: Օրենսգրքի 38-րդ հոդվածով առանց լեռնահատկացման ակտի արգելվում է օգտակար հանածոյի արդյունահանումը շահագործական նպատակով: Վերահսկողությունն ընդգրկող

ժամանակահատվածում, Սոթքի հանքավայրերի շահագործման համար լեռնահատկացումը կատարվել է 25.08.2009թ.-ին թիվ 279 լեռնահատկացման ակտով, այսինքն, ըստ էության, ընկերությունը 01.01.2007թ. մինչև 25.08.2009թ. հանքավայրը շահագործել է ոչ օրինական:

#### **4. Ոսկու կորզման վերաբերյալ**

Ընկերությունը 2008թ.-ի ընթացքում Սոթքից Արարատի կորզման ֆաբրիկա է առաքել 51.9 հազ. տոննա ապրանքային հանքաքար, որտեղ ոսկու քանակը կազմել է՝ 191,5 կգ: Ֆաբրիկայում վերամշակվել է 50.3 հազ. տոննա հանքաքար, որի մեջ ոսկու քանակը կազմել է 175.277 կգ, կորզվել է 123.828 կգ ոսկի, կորզումը կազմել է 70.65%, որը մոտ 11.8% ցածր է նախագծով նախատեսված՝ 82.5% ցուցանիշից, այսինքն՝ շուրջ 20.77 կգ-ով պակաս է կորզվել:

Ընկերությունը 2009թ.-ի ընթացքում Սոթքից Արարատի կորզման ֆաբրիկա է առաքել 495.8 հազ. տոննա ապրանքային հանքաքար, որից 19,6 հազ. տոննան պահեստից: Ոսկու քանակը ապրանքային հանքաքարում կազմել է 1,524.56 կգ: 2009թ.-ի ընթացքում ֆաբրիկայում վերամշակվել է 486.1 հազ. տոննա հանքաքար, որի մեջ ոսկու քանակը կազմել է 1,514.1 կգ, կորզվել է 940.163 կգ ոսկի, կորզումը կազմել է 62.1%, որը 20.4% ցածր է նախագծով նախատեսված 82.5% ցուցանիշից, այսինքն շուրջ 308.96 կգ պակաս է կորզվել:

Ընկերությունը 2010թ.-ի առաջին եռամսյակում Սոթքից Արարատի կորզման ֆաբրիկա է առաքել 100.2 հազ. տ ապրանքային հանքաքար, որից 12.0 հազ. տոննա՝ հանքավայրի պահեստից: Ոսկու քանակը ապրանքային հանքաքարում կազմել է 315.1 կգ: Այդ ընթացքում ֆաբրիկայում վերամշակվել է 120.3 հազ. տ հանքաքար (19.6 հազ. տ հանքաքարը ֆաբրիկայի պահեստից), որտեղ ոսկու քանակը կազմել է 337.373 կգ: Ըստ ներկայացված տվյալների վերամշակման արդյունքում կորզվել է 149.987 կգ ոսկի, կորզումը կազմել է 44.43%, որը 38.1%-ով ցածր է նախագծով նախատեսված՝ 82.5% ցուցանիշից, այսինքն՝ շուրջ 128.34 կգ-ով պակաս է կորզվել:

#### **5. «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի պահանջների կատարման վերաբերյալ**

«Տեխնիկական անվտանգության ազգային կենտրոն» ՊՈԱԿ ռեեստրում 27.07.2006թ.-ից գրանցվել է թվով 56 արտադրական վտանգավոր օբյեկտ: Հանքարդյունահանման աշխատանքների անվտանգ կատարման տեսակետից անհանդուրժելի իրավիճակում է

հայտնվել Սոթքի հանքավայրից բաց եղանակով արդյունահանվող հանքարանր: Հանքարանի առանձնապես հարավային կողում, երկարատև նորոգման աշխատանքների բացակայության պայմաններում տեղի ունեցած փլուզումների և ապարների սահքի հետևանքով խախտվել են հանքաստիճանների և աշխատանքների անվտանգ կատարումն ապահովող՝ ապահովիչ բերմանների համար սահմանված չափսերն ու դրանց թեքության անկյունները, ստեղծելով աշխատանքային վտանգավոր իրավիճակ շրջապատի համար: Ներկա վիճակում Սոթքի բացահանքը իրենից ներկայացնում է 100-150 մետր խորությամբ, անկանոն առանձին տեղամասերում ուղղաձիգին մոտ կողերով մի փոսորակ, որը մեծ վտանգ է ներկայացնում ոչ միայն հանքում աշխատողների, այլև՝ շրջապատի համար: Հանքարանի, հատկապես դրա հարավային կողի եզրագիծը կարիք ունի անհապաղ արգելափակման:

### **Խախտվել է՝**

- «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջը՝ շահագործվող արտադրական վտանգավոր օբյեկտը ենթակա է տեխնիկական անվտանգության փորձաքննության տարեկան առնվազն մեկ անգամ: Նույն օրենքի 21-րդ հոդվածի 5 կետով արտադրական վտանգավոր օբյեկտների փորձաքննություն չանցկացնելն առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուրի համար նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով, որը հաշվարկելու դեպքում կկազմեր 2007 թվականի համար՝ 56,000.0 հազ. դրամ, 2009 թվականի համար՝ 7,000.0 հազ. դրամ, 2010 թվականի համար՝ 13,000.0 հազ. դրամ:

Արձանագրված վերոգրյալ խախտումների և թերացումների հետևանքով պետությանը պատճառված վնասը ենթակա է փոխհատուցման ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, մասնավորապես՝ համաձայն «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 61-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Ընդերքօգտագործողի գործողությունների պատճառով պետությանը հասցված վնասը՝ հանքավայրի ընտրովի մշակման, ընդերքօգտագործման ընթացքում խեղաթյուրված տեղեկատվության ներկայացման (այդ թվում արդյունահանված և ընդերքում կորսված պաշարների մասին) հետևանքով, որոնք հանգեցրել են հանքավայրի փչացմանը կամ ընդերքից հետագա օգտվելու հնարավորության լրիվ կամ մասնակի բացառմանը, ենթակա է փոխհատուցման ընդերքօգտագործողի հաշվին, նա պարտավոր է

մուծել սահմանված բնավճար (ռոյալթի)՝ պետական հաշվեկշռում գրանցված և պայմանագրով օգտագործման տրամադրված ամբողջ քանակի համար:

## **6. Ընկերության 100% բաժնեմասի գրավադրման վերաբերյալ**

Հարկ է նշել, որ 2010թ.-ի հուլիսի 22-ին, համաձայն բաժնեմասի գրավի պայմանագրի «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության միակ մասնակից, 100% բաժնեմասի սեփականատեր «Ֆրսթ Դայնսթի Մայնս Արմենիա» լիմիթեդ ընկերությունը, ՎՏԲ Կապիտալ ՓԻ-ԷԼ-ՍԻ բանկում (Ռուսաստանյան ՎՏԲ բանկի անգլիական մասնաճյուղ) գրավադրել է «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը ի շահ Կառլոու ԲիՎի ընկերության, որին ՎՏԲ Կապիտալ ՓԻ-ԷԼ-ՍԻ բանկի կողմից 2010թ.-ի հունիսի 22-ին տրամադրվել է 250,000,000 ԱՄՆ դոլար վարկ: Բաժնեմասի գրավի պայմանագրի 9-րդ կետի դրույթներով, նախատեսված են մի շարք իրադարձություններ, որոնց ի հայտ գալուն պես վարկառուի պարտավորությունները համարվում են չկատարված, և այդ դեպքում ՎՏԲ Կապիտալ բանկը ձեռք է բերում բացարձակ իրավունք գրավի տակ գտնվող ակտիվները փոխանցելու երրորդ անձանց՝ առանց գրավատուի համաձայնությունը ստանալու:

Անհրաժեշտ է նշել, որ վերահսկողության ընթացքում, արձանագրվել է, որ Կառլոու ԲիՎի ընկերության կողմից ստացված 250,000,000 ԱՄՆ դոլար վարկի գումարներից «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության հաշվին միջոցներ չեն փոխանցվել, այն դեպքում, երբ ընկերությունը, համաձայն, 2008թ.-ի փետրվարի 29-ին կնքված Սոթքի, ինչպես նաև Սեդրաձորի ոսկու հանքավայրերից «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման» համապատասխան թիվ 368 և 369 լիցենզային պայմանագրերի համապատասխան դրույթների ստանձնել է մի շարք ներդրումային պարտավորություններ (հանքաքարի վերամշակման նոր սարքավորումների և հանգույցների ձեռք բերում և տեղադրում, վերամշակման տեխնոլոգիաների կատարելագործումներ և արդիականացումներ), որոնք մինչ օրս չեն իրականացվել:

## **ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ**

- «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության 100% բաժնեմասը գրավադրված է ՎՏԲ Կապիտալ ՓԻ-ԷԼ-ՍԻ բանկում ի շահ Կառլոու ԲիՎի ընկերության, որին բանկի կողմից 2010թ.-ի հունիսի 22-ին տրամադրվել է 250,000,000 ԱՄՆ դոլար վարկ, որից որպես ներդրում հայաստանյան «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերություն միջոցներ չեն

հատկացվել, այն դեպքում երբ վերջինս ստանձնել է մի շարք ներդրումային պարտավորություններ, որոնք դեռևս իրականացված չեն:

- Հանքային իրավունք կրող՝ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությունը աշխատում է խոշոր վնասներով, ինչի մասին վկայում են Ընկերության կողմից ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե նարկայացրած շահութահարկի հաշվարկ-հաշվետվությունները համաձայն որոնց, ընկերության վնասները կազմել են 2007թ.-ին՝ 16,034,189.0 հազ. դրամ, 2008թ.-ին՝ 17,270,237.0 հազ. դրամ, 2009թ.-ին՝ 11,605,621.0 հազ. դրամ:
- 2008թ.-ի փետրվարի 29-ին կնքված ՀՀ Գեոարքունիքի մարզի Սոթքի, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրերից «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման» թիվ 368 և թիվ 369 լիցենզային պայմանագրերը կնքվել են ոլորտը կանոնակարգող օրենսգրքի, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների խախտմամբ:
- Լիցենզառու՝ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության կողմից սկսված 2004թ.-ի հուլիսի 1-ից մինչև 2008թ.-ի փետրվարի 29-ը, ՀՀ Գեոարքունիքի մարզի Սոթքի, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրերի շահագործումը և հանքարդյունահանումը կատարվել է առանց ուժի մեջ մտած լիցենզիաների, որը, ըստ էության ապօրինի գործունեություն է:
- Լիցենզային պայմանագրերով, լիցենզառու՝ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությունը, օրինական հանքահանում վերսկսելու համար, ստանձնել է մի շարք պարտավորություններ և գործառնություններ, որոնք, սակայն, չեն իրականացվել: Մասնավորապես՝
  1. հանքավայրերի պաշարների արմատական վերագնահատման-վերահաստատման աշխատանքներ,
  2. հանքավայրերի շահագործման նոր նախագծեր,
  3. Սոթքի հանքավայրում «առաջին» 30 ամիսներին (ժամկետը լրանում է 29.08.2010թ.-ին) կատարվելիք լեռնանախապատրաստական աշխատանքների կատարման մանրամասն ծրագիրը ներկայացվել է ուշացումով, իսկ արդյունահանման աշխատանքները սկսվել են առանց «Լիազոր մարմնի» համաձայնության,

4. բնապահպանական միջոցառումների ժամանակացույց և դրանց առնչվող ծախսերի նախահաշիվներ,

5. տարեկան նվազագույնը արդյունահանել 600,000 տոննա հանքաքար Սոթքի հանքավայրից (արդյունահանվել է 2007՝ 16,655 տ, 2008՝ 29,236 տ, 2009՝ 320,554 տ, ընդամենը 366,445 տ) և 120,000 տոննա՝ Մեղրաձորի հանքավայրից (արդյունահանվել է 2007՝ 1,600 տ, 2008՝ 0 տ, 2009՝ 0 տ, ընդամենը 1,600 տ):

- «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի համաձայն ընկերությունը պարտավոր էր տրամադրված տարածքի համար ՀՀ պետական բյուջե վճարել տարեկան Սոթքի հանքավայրի համար՝ 3,830.0 հազ. դրամի, իսկ Մեղրաձորի հանքավայրի համար 2,210.0 հազ. դրամի չափով կոնցեսիոն վճար, որը առ այսօր (2010թ.-ի սեպտեմբերի 23) չի վճարվել: Կոնցեսիոն վճարի գծով պարտքը կազմում է Սոթքի հանքավայրի համար 15,320.0 հազ. դրամ իսկ Մեղրաձորի համար՝ 8,840.0 հազ. դրամ, կամ ընդամենը՝ 24,160.0 հազ. դրամ, որը ենթակա է վճարման ՀՀ պետական բյուջե:

- Աղքատացման ցուցանիշը Ծրագրով սահմանված 15%-ի փոխարեն կազմել է 36%, որը անթույլատրելի շեղում է, և «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի համաձայն համարվում է էական խախտում:

- Ապրանքային հանքաքարի որակը և քանակը վերջնականապես որոշվում և ձեռնարկության հանքարդյունահանման ընդհանուր հաշվեկշռում գրանցվում է բացառապես Արարատի ֆաբրիկայում, վերամշակման արդյունքում ստացված տվյալներով, հետադարձ հաշվարկով՝ սկսած ստացված վերջնական արդյունքից մինչև ընդերքից արդյունահանված հանքաքարը, որն անթույլատրելի է և հանգեցնում է հաշվեկշռային պաշարների և մարված պաշարների հաշվարկի աղավաղմանը:

Համաձայն «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 42-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը ընդերքօգտագործողը պարտավոր է ապահովել հետախուզված, ընդերքից արդյունահանված և դրանում թողնված օգտակար հանածոների պաշարների, դրանց պարունակած բաղադրամասերի, որակի ու քանակի մասին հավաստի տվյալների



հավաքումը, պահպանումը և լիազորված մարմնին տրամադրումը: Մինչդեռ ընկերության կողմից ՀՀ կառավարության 09.11.2006թ.-ի թիվ 1678-ն որոշման պահանջը չկատարելով, անհավաստի է դարձել «Լիազոր մարմին» ներկայացված օգտակար հանաժողովների արդյունահանման մասին տեղեկատվությունը:

- Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածում, Սոթքի հանքավայրի շահագործման համար լեռնահատկացումը կատարվել է 25.08.2009թ.-ին թիվ 279 լեռնահատկացման ակտով, այսինքն, ըստ էության, ընկերությունը 01.01.2007թ. մինչև 25.08.2009թ. հանքավայրը շահագործել է ոչ օրինական:
- Ընկերությունը, 01.01.2008-01.04.2010թթ. ժամանակահատվածում Սոթքի հանքից Արարատի կորզման ֆաբրիկա է առաքել 648.0 հազ. տոննա ապրանքային հանքաքար, որտեղ ոսկու քանակը կազմել է 2031 կգ: Ֆաբրիկայում վերամշակվել է 656.0 հազ. տոննա հանքաքար, որի մեջ ոսկու քանակը կազմել է 2026 կգ, կորզվել է 1214 կգ ոսկի, կորզումը կազմել է 59.89%, որը շուրջ 22.6% ցածր է նախագծով նախատեսված՝ 82.5% ցուցանիշից (պետք է կորզվեր՝ 1672 կգ), այսինքն՝ շուրջ 458 կգ-ով պակաս է կորզվել:
- Վերոգրյալ խախտումների և թերացումների համար, համաձայն «Ընդերքն օգտակար հանաժողովների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված պահանջի, «Լիազոր մարմինը» կարող է հանքային իրավունք կրող տնտեսավարող սուբյեկտին տալ գրավոր զգուշացում, եթե նա՝ 1) չի կատարում սույն օրենքով նախատեսված պարտավորությունները, 2) չի կատարում հանքային իրավունքի պայմանները, այդ թվում՝ լիցենզային պայմանագրով, նախագծով եւ լիցենզիայով նախատեսված իր պարտավորությունների իրականացմանն առնչվող պայմանները: Նշված ենթակետերով, օրենսդրական և պայմանագրային մի շարք խախտումների ու թերությունների համար լիցենզառու «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությանը «Լիազոր մարմին» կողմից պետք է տրվեր համապատասխան գրավոր զգուշացում և համաձայն «Ընդերքն օգտակար հանաժողովների շահագործման նպատակով ուսումնասիրության և արդյունահանման համար տրամադրելու (Կոնցեսիայի) մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 4-րդ մասի, սահմանելով առավելագույնը 90-օրյա ժամկետ՝ նշված թերությունների վերացման համար: Վերոգրյալի փոխարեն, առանց համապատասխան իրավական հիմնավորման, «Լիազոր մարմին» կողմից «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ

ընկերությանը 27.08.2010թ.-ի թիվ 01/27/2713-10 գրությամբ տեղեկացվել է, որ Սոթքի ոսկու հանքավայրի շահագործման նախագծում փոփոխություններ կատարելու համար սահմանվել է նոր վերջնաժամկետ, այն է՝ մինչև 2012թ. 4-րդ եռամսյակը:

### **ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

#### **1. ՀՀ կառավարությանը**

- Բննարկել, 2008թ.-ի փետրվարի 29-ին կնքված, առանց ոլորտը կանոնակարգող օրենսգրքի, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանման, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրերից «Հանքարդյունահանման նպատակով ընդերքօգտագործման» թիվ 368 և թիվ 369 լիցենզային պայմանագրերի վավեր լինելու հարցը:
- Բննարկել, ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրերի շահագործման հանքային իրավունք կրող «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության հանքային իրավունքների դադարեցման հարցը:
- Բննարկել, հանքային իրավունք կրող՝ «ԳեոՊրոՄայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության կողմից 2004թ.-ի հուլիսի 1-ից մինչև 2008թ.-ի փետրվարի 29-ը, առանց ուժի մեջ մտած լիցենզիաների՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Սոթքի, ինչպես նաև ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձորի ոսկու հանքավայրերի ոչ օրինական շահագործման և հանքարդյունահանման հարցը:
- Բննարկել, շարունակական բնույթ կրող, օրենսդրական և պայմանագրային խախտումների չարձանագրման և դրանց կանխման/վերացման նպատակով չիրականացված գործառույթների համար պատասխանատու համապատասխան պաշտոնատար անձանց՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու հարցը: